ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
2020թ.-ի մայիսի 19-ին կնքված J529-20 Ապրանքի մատակարարման-վաճառքի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «12» հունվարի 2021թ.

«ԷՎՐԻ ԴԵՑ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝«Մատակարար-վաճառող»), ի դեմս տնօրեն Արման Մանասերյանի, ով գործում է Մատակարար-վաճառողի կանոնադրության հիման վրա մի կողմից և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «Գնորդ»), ի դեմս տնօրեն Դավիթ Փափազյանի, ով գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից հետագա շարադրանքում միասին անվանվելով «***Կողմեր***», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «***Կողմ***», գործելով ՀՀ օրենսդրության հիման վրա և հիմք ընդունելով Կողմերի միջև «19» մայիսի 2020 թվականին կնքված թիվ N J529-20 Մատակարարման-վաճառքի պայմանագիրը (այսուհետ՝«Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր») հետևյալի մասին.

1. Կողմերը սույնով համաձայնվում են

1.1 Պայմանագրի 1.2-րդ կետը փոփոխել և հաստատել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Մատակարար-վաճառողի կողմից մատակարարվող ապրանքներն են (այսուհետ նաև՝ ապրանք)՝

ա) 19 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «Բյուրեղ» ջուր,

բ) 12 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «Մաքուր Ջուր» ջուր,

գ) 19 լիտր տարողությամբ շրջանառելի (բազմակի օգտագործման) տարաներով (շշերով) մատակարարվող «Մաքուր Ջուր» ջուր,

դ) մեկանգամյա օգտագործման բաժակներ,

ե) Հավելյալ ապրանքներ, որոնք ներկայացված են www.jur.am պաշտոնական ինտերնետային կայքում:

Բոլոր ապրանքների մանրամասն նկարագրին կարող եք ծանոթանալ www.jur.am ինտերնետային կայքում:»:

1.2 Պայմանագրի 1.3-րդ կետը փոփոխել և հաստատել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Պայմանագրի «ա» ենթակետից մինչև «գ» ենթակետում նշված ապրանքը խցանափակվում է մեկանգամյա օգտագործման խցաններով:»:

1.3 Պայմանագրի 4.1-րդ կետը փոփոխել և հաստատել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Գնորդին «Բյուրեղ» ջուրը կտրամադրվի մեկ շիշը (19լ) 1,950 (մեկ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամով, 12 լիտրանոց շշով «Մաքուր Ջուր» ջուրը՝ մեկ շիշը 1,100 (մեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամով, 19 լիտրանոց շշով «Մաքուր Ջուր» ջուրը՝ մեկ շիշը 1,600 (մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամով, մեկանգամյա օգտագործվող բաժակների մեկ հատի արժեքը 10 (տասը) ՀՀ դրամ, սառը ջրի համար նախատեսված բաժակի մեկ հատի արժեքը կազմում է 6 (վեց) ՀՀ դրամ, թղթյա բաժակի 180 մլ-ի մեկ հատի արժեքը կազմում է 15 (տասնհինգ) ՀՀ դրամ: Բոլոր գները ներառում են 20% ԱԱՀ:»:

1.4 Պայմանագրի 5.4-րդ կետը փոփոխել և հաստատել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Մատակարար-վաճառողը պատասխանատվություն է կրում ապրանքի թերությունների համար, եթե գնորդն ապացուցում է, որ ապրանքի թերություններն առաջացել են մինչև իրեն հանձնելու պահը կամ մինչև այդ պահը ծագած պատճառներից՝ լրացուցիչ պայմանները սահմանված են մեր պաշտոնական կայքում՝ www.jur.am:»:

2. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման (Կողմերի ստորագրման) պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Համաձայնագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:
Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարար-վաճառող՝	**Գնորդ՝**
«ԷՎՐԻ ԴԵՅ» ՓԲԸ	«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ
Իրավ. և գործ. հասցե՝	Իրավ. հասցե՝ք. Երևան, Մ. Ադամյան 2/2
ք. Երևան, Դավիթ Բեկ 54/5	Գործ. հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 37
ՀՎՀՀ՝ 09104669	ՀՎՀՀ՝ 02697868
Հ/Հ՝ 217001111525001	Հ/Հ՝ 24149001211900
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ	Յունիբանկ ԲԲԸ
Տնօրեն՝ Արման Մանասերյան	Տնօրեն՝ Դավիթ Փափազյան